

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԴՊՎԱԶՆՆԻՍՎԱՆ

## ՀՈՒՇԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծեմարանի գոյությունը հայոց երկրի սրբում պատմական մի մեծ շարժման նախակարապետն էր։ Հայի համար դպրոցը միշտ էլ մի առանձին մազմական գրավիչ ուժ է եղած, իսկական ավագանն այն նոր հոգեկան ապրումների, ուր ամեն հայի ներքին ձգտումն է եղած յուր զավակը մկրտել կրկին և «մարդ շինել»։ Թեմական հոգևոր դպրոցներն այդ ձգտման ավելի բարձր թոշքների օրուան էին և ամեն հայ հայր, ամեն ինչից հակ զրկվելու հեռանկարն աչքի առաջ ունենալով, աշխատում էր այդ «լուստմատունը» դնել տալ յուր զավակը, որ «մարդու շարքն անցնի»։ Գևորգյան Ծեմարանը յուր առանձնահատուկ դիրքով, ուսման լայն ու խոր չափերով, կարող ու հնուտ ուսուցիչների կազմով, որ միշտ էլ նախանձն է շարժել մեր հոգևոր դպրոցների վարչությունների, ամեն ինչ ձրի տալու պատրաստականությամբ՝ ուսում, ապրուստի ու հագելիքի բոլոր պիտույքների մատուցարությամբ, դարձած էր կովկասյան հայության վերին ձգտումների կենտրոն, մանավանդ աղքատիկ դասի և միշտն դասակարգի ծնողների և հոգու զավակների համար։ Վերջինների անհազ փափազն էր «Ծեմարան մտնել»։

Այդ շրջանի մեջ ունեինք երկու Ծեմարաններ՝ Արևելյան լեզուների Լազարյան Ծեմարանը Մուսկվայում, որի դպրոցական առարկաների դասավանդությունը կատարվում էր ոսուերեն, բացի հայոց լեզվի դասերից, և որից ելնողների առաջ, ըստ նախնական ծրագրի, բաց էին կամ պիտի լինեին դիվանագիտական ծառայության ասպարեզը՝ մեծի մասսավ Ռուսաստանում և Մերձավոր Արևելքի մեջ։ Այդ ասպարեզի անձերը դառնում էին պետական ծառայողներ՝ ոսու աստիճանավորներ, ալիքներ՝ չինովնիկներ, ինչ որ նախնական շրջանում այնքան մեծ, առինքնոր ուժ էր հայ քաղքնու կամ գյուղացու աչքին, որովհետև յուր տղան «քազակորի դուլուում էր և չինովնիկ»։

Ժամանակները, նոր մտքերի հեռանկարները փոխեցին այդ արտաքին գրավչության մազմակը, «չինովնիկ» լինելը կորցրեց իր մազմական ուժը և մնաց յուս գրավիչ կողմը՝ ուսում ստանալու ցանկությունը։ Այդ ցանկությունն իրավործելը բավականին հժվար էր։ Ամենից առաջ, որ Լազարյան Ծեմարանի ուսումն ու ապրուստը ձրի չէր, այլ պիտի վճարվեր։ Ժմ դարի կեսերից սկսած և դեպի դարավերջ տարեկան 400-600 թոշակ վճարելը կովկասյան հայության կողմից, մեծ գումար էր Ակատովում ծնողների աչքին։ Երկրորդ՝ Մուսկվայի հեռավորությունը և կիլմայական դաժան պայմանները, որոնք հաճախ ողբերգական վախճան էին ունենում կովկասից զնացող հայ տղաների համար՝ մի դրություն, որ ծնողներին, մանավանդ մայրերին, տասը չափել, մի կտրելու հարկ ու պահանջի տակ է դնում։ Ծշմարիտ է, Լազարյան Ծեմարանը ուներ նաև ձրի թոշակառուների որոշ քանակ, հատկապես հայ տղաների համար, կովկասի և Հարավային Ռուսաստանի հայության հատկացրած՝ Աստրախան, Մողոլոկ, Թեղողսիա, Նոր Նախիջևան, Սիմֆերոպոլ, Արմավիր և այլն, թոշակներ, որոնք հատկացված էին Լազարյան Ծեմարանի հիմնադիրներից իշխան Հովհակիմ և Խաչատուր աղամերից, դյուրացնելու հայ ժողովորի կրթության հար-

ցը: Սակայն այդ թոշակմերն ստանալ և ապահովվել. շատ դժվարին գործ էր, բաճախ և անմերձանալի, որովհետո առաջարկվող սահմ հայրը պիտի շատ լավ քաղաքական և հասարակական կապեր ունենար, որ կարող լիներ ազդել Հազարյան ճեմարանի իշխան Բոգդարձուի վրա, որի կամքից որ ցանկությունից էր կախված թոշակի հատկացումն այս կամ այն թեկնածուին: Եվ կամ թեկնածուի հայրը պեսոք է մոտ, և երտ հարաբերություն մշակած լիներ Կովկասյան թեմերի հայ առաջնորդներից կամ սինողի եպիսկոպոսներից մեկի հետ և կամ ունենար այլ կապեր՝ բարձրաստիճան և հաճախ անմերձանալի այդ բարձր դիրքի եկեղեցականների վրա ազդելու: Եվ այդ դժվարությունները բաճախ անլուծելի հանգույցներ էին, որպեսզի ուշիմ, մտացի ձիրքերով օժտված պատաճներ ուսանել կարող լինեն իրենց վերջնական ձգտման՝ մոտել Արևելյան լեզուների Հազարյան ճեմարձումեր:

Խնայիրն այլ էր Ս. Էջմիածնի սրտի վրա կառուցված նոր կրթարանի՝ ճեմարանի Շաբաթմամբ: Իր մեծ հիմնադրի՝ Գևորգ Դ-ի Եական հապատակն էր եղած՝ տալ ոսկում և զիտություն իր ժողովութիւն և այդ ուսումն ու զիտությունը մատակարարել կատարելապես ձրի, առանց թոշակի պարտադրության: Ծեմարանի վարչությունն ինքն էր ընդառաջ գնում յուր սաների ուսման ծարավին: Դժվարություններ չկային, Բարթված էին, միայն մի պահանջ կար՝ ունենալ ուշիմ, մտացի, քաջառողջ և սովորելու ընդունակությամբ սատարում թեկնածումեր:

Եվ այս կայծը պարզված էր ամեն մի աշքաբաց, խելացի, ուսման ծարավով պապակուն տղայի: Եվ այդ տղամերը գալիս էին գունդագումն, պարսերով ու երամներով Լշմիածին՝ սկսած դպրոցական տարեմուստի նախորդ երկու շաբաթներին, սկսած օգոստոսի 15-ից, որովհետո օգոստոսի 24-ից սկսվում էին նորեկների քննությունները, մինչև օգոստոսի 29-30-ը, որպեսզի սեպտեմբերի 1-ից դպրոցական տարին սկսվեր՝ ավանդական անխախտ կարգով:

Եվ Հայոց աշխարհի ո՞ր մասից, անկյունի մեջ կորած զյուր ու քաղաքից, լեռների զագաթներից, անտառներում ու ձորերի խորքում թաղված վայեկից թոշում-զալիս, Լշմիածին էին հասանում ուսման ծարավ, կրթության կարու այդ հոգիները, ստանալու առատ ու լիաբուուն Բայրենի կրթություն՝ լայն, խոր, անսահման չափերով, գիտության նոր եղանակներով, մանկավարժական վերջին պահանջներով, կարող ու ձեռնահաս ուսուցիչների ձեռքով:

Հայոց աշխարհի տարագների, արդ ու կապուտի, շարժ ու ձևերի, օրին ու կոշտ երևությների, կապոյտ ու սև աշեղի, արծվի ունագի ու կճատ քենրի, բարձրահասակ, ուղիղ պատամիների մի բնական, գրավիչ, զգարթ հետաքրքրական մի ցուցահանդես էր օգոստոսի այդ վերջին օրերը ճեմարանի «կարմիր դոմից» մերս և օրա լայն պարիսապների մեջ ծվարած բակում: Այդ օրերին ճեմարանի բակում կհանդիպեիր պոլսնեցուն, զեյթունցուն, ապարանցուն, երևանցուն, կարմնեցուն, խոյեցուն, թավորիզնեցուն, յարաբաղցուն, ախալցխացուն, զյումբեցուն, մաստարեցուն, օշականցուն, թիֆլիսեցուն, թեղավցուն, մողդուն, իգիունցուն, հին ու նոր նախջնանցուն, դրիմցուն, արմավիրցուն, ախալքալացուն և մանավանդ վաղարշապատցուն, անգամ հեռավոր Բաննցուն ու մարաշնեցուն:

Եվ այդ հարյուրավոր թեկնածումերից ընտրում, գտում էին միայն մի քանի տասնյակ

ընտրյալների, եղջանկների մի փոքր բանակ, որոնց առաջ բացվում էին գիտության տաճարի լայն դռները, սրբության տաճարի հովանու տակ մաքրվելու, զտվելու, հասունանալու և պիտանի լինելու հայության ամեն խավերին՝ պիտուքի ու կարիքի համաձայն՝ հոգեվոր պաշտոնյա, գիտնական, մանկավարժ, մտավորական և ընդհանրապես կրթված քահարացի:

... Ծեմարանի մեջ աշակերտների դասերի պատրաստության ժամերը չորս ու կես ժամ էին երեկոյան: Մինչ այդ՝ ժամը 2.00-ից մինչև 4.30-ը, աշակերտներն ազատ էին՝ նվիրված խաղերի, զբուանքի, ծաղկանոցների ու մարգերի մշակության, վազելու, ցատկելու, ծառեր մազցելու կամ ճեմարանի ընդարձակ պարտեզի և կամ ճեմարանի մեծ և փոքր՝ հարավային ու հյուսիսային բակերի մեջ հանգիստ շրջագայելու: Աշակերտությունը, ըստ ամենայնի, բնական միտումով ձգտում էր որքան հնարավոր է այդ ազատ ժամերը դադարել օգտակար:

... Ծեմարանի կյանքի մեջ «Անրության ժամերը» նոյնօքան սրբազն պահեր էին, որքան դասերի ժամերը: Եվ եթե այս վերջինները մտցի սեռունդ հոգելոր «կաթի ջամբման (Կերակրման – Պ. Հ.)» պահերն էին, որի մատակարարները ճեմարանի հոյն ժամանակի ամենից պատրաստված և կարող ուսուցիչների խումբն էր: Ստ. Պալասանյան՝ «Հայոց պատմության» այդ անզուգական և հմայիչ պատմաքանն ու ուսուցիչը, Կ. Կոստանյանը՝ «Հայոց լեզվի և գրականության» հմտու, աղինքնող, հեղինակավոր աղբյուրը, Փ. Վարդանյանը՝ «Հին ու նոր պատմության», «Ընդհանուր գրականության պատմության», իւկապես ամսպատ գիտության և հետաքրքրության մղող վիուզը, Նիկ. Խոսրովյան՝ «Ռուսաց լեզվի և գրականության» առատահուն ակնի ուսուցիչը, Սեդ. Մանդինյանը՝ փիլիսոփայության, մանկավարժության առարկաների վարպետը, Արշ. Նահապետյանը՝ տիեզերագիտության, բնալուծության չորուցամաք դասերը բանաստեղծական շնչով ու գիտականուն հմայիչ բացատրողը, Աղեք. Սիմոնյան՝ թվարանության, գրահաշվի, երկրաչափության, եռանկումաչափության, բարձր մաթեմատիկայի տարրերի գիտությունը հետաքրքրությամբ վարող-ավանդողը և այլն: Արևա այս կարող ուսուցչական խումբը գիտեր այդ կաթը ջամբել (Կերակրել – Պ. Հ.) ուսման ծարավ մտքերին ու հոգիներին՝ «դասերի ժամերին»: Այդ ժամերի ջամբածն ու տվածը լուրացնելու, սեփականություն դարձնելու, ամրարելու և շտեմարանի գենքերը պատրաստելու պահերը «Անրության ժամերն» էին:

Ծեմարանի երկրորդ հարկի հյուսիսային երկու մեծ սրահները «Անրության»-ներն էին: «Անրության ժամի» զանգավառ հնձելուց հետո ճեմարանի աշակերտության մի մասը՝ Ա, Բ, Գ դասարանները, ժողովվում էին սրահներից մեկի և մյուս մասը՝ Դ, Ե, Զ դասարանների աշակերտությունը, մյուս սրահի մեջ, իսկ լսարաններն իրենց Ա, Բ, Գ լսարանների մեջ: Հազիկ երկու դոպե անցած, ամբողջ ճեմարանը խորասուզվում էր խոր լորության մեջ, դադարում էր ամեն շարժում, տիրում էր մեռելային մի վիճակ՝ ձայն, շատում դադարում էր: Ամենքը նստած խոշոր գրասեղանների շուրջ՝ 20-ական հոգի, տարված էին միայն մի էական նպատակով՝ պատրաստվել հետևյալ օրվա դասերի պատրաստությամբ, շարադրություն գրելու, խնդիրներ լուծելու, օժանդակ գրքերի ընթերցանության մեծ գործով: Ոչ ոք իրավունք ուներ շարժվել տեղից, խոսել իր մոտ նստածի հետ, նույնիսկ շշուկով: Նույնիսկ տետրակի թերթերը, գրքի թղթերը թղթատելու պահին իսկ ամենա-

փոքր ձայն, շշուկ լսվեր՝ հսկող վերակացողի անևելի քայլքով մոտենալը ու ձեռքն աշակերտի ուսին դնելը մենք էր լինում, մի պարագա, որ ամենամեծ ամոթանքն էր մեջի ու փոքրի համար, և ամբողջ սերտարանի հուզված աչքերն ուղղվում էին խաղաղությունը վրդովելու անհանդուրժելի խանգարման հետինակի վրա, և խեղճը չէր իմանում, որ ծակը մշտական էր: Խճճարդարացման ամենակոքը իսկ փորձ՝ ո՞չ տանելի էր և ո՞չ էլ սերելի: Ամենից մոտ ընկերը, առանց խեղամարդության, դատապարտության քվե տալու պատրաստ էր իր ընկերոց, որովհետև սրբազն լուսությունը, հոգևոր մատակարարության պահի վեհությունը խանգարված էր ի վեաս ուշիմ աշակերտի, մտքի ծարավով տարված հոգու:

Բառարաններ, օժանդակ մատյաններ, տեղեկատու աղբյուրների գրքերը դարսված էին մեծ, լայնչի (լայնածավալ – Պ. Հ.) սեղանների վրա, որից օգտվելը պահանջ էր, արտոնություն, իրավունք՝ առանց ուրիշի իրավունքը խանգարելու: Եվ այդ խոր, պատամեկան տարիներից պատրաստված գիտակցությունը ստվորության էր, որ այնքան շեշտված էր իր ճեմարանից ելած յուրաքանչյուր աշակերտի բնավորության մեջ:



Ճեմարանի այդ շրջանի մեջ դասական լեզուներ չէին ավանդվում: Այդ առարկաները մտան ավելի հետո: Այդ օրերից իսկ նիկողայոս Տեր-Ավետիքյանը զգում էր իր մեջ իր ապագա կյանքի ուղղության հետևելու հակումը և հաճախ էր զանգատվում, թե պարսկերնենի և տաճկերնենի կողքին իմչո՞ւ պիտի չափանդվեին և լատիներնենն ու հունարենը, որոնցից մանավանդ վերջինը, որ այնքան խոր ազդեցությունը էր ունեցած հայոց լեզվի քերականության և շարահյուսության կազմի վրա՝ մի կողմ թողնելով բառամեթերքի կազմը:

Եվ դեռևս ճեմարանի 4-5-րդ դասարանների մեջ Նիկողայոսը սկսեց ազատ ժամերին սովորել երկուսը ևս՝ ավելի ժամանակ հատկացնելով հունարենին: Բայց ինքնուսուցման եղանակը հրաճ չգործացրեց և մտադրվեց ճեմարանն ավարտելուց հետո պատրաստվել ուսական գիմնազիայի քննության, որովհետև վերջնական իր որոշումն էր մտնել համալսարան և հետևել Արևելյան լեզուների գիտության:

Ճեմարանի լսարանական բաժինն ավարտելուց հետո նա անցավ Թիֆլիս՝ պատրաստվելու գիմնազիական քննության: Գևորգյան ճեմարանը թենի իր գիտության չափով շատ ավելի բարձր էր ուսական գիմնազիայի տված ուսման ծրագրից, սակայն և այնպես ճեմարանի դպրոցական շրջանն ավարտողները, որոնք ուսման չափով համարավասար էին գիմնազիական գիտության, պետական օրենքով իրավունք չունեին, իբրև իսկական ուսանողներ, համալսարան մտնելու: Նույնիսկ լսարանական մասմագիտական բաժինն ավարտողները գրկված էին այդ իրավունքից և կարող էին համալսարան հաճախել լոկ իբրև ազատ ունկնդիրներ, չնայած որ գերմանական համալսարաններն անխստիր ընդունում էին Գևորգյան ճեմարան ավարտողներին, նույնիսկ դպրոցական շրջանն անցածներին, իբրև իսկական ուսանողներ:

Սույնան անցնելով Թիֆլիս՝ կարող եղավ մեջ տարվա մեջ պատրաստվել և պետական

զիմնագիայի քննությունները հանձնել՝ կրելով նյութական ծանր նեղություններ: Բայց նա վհատվող ներից չեր՝ նեղությամբ, չարչարանքով, գրկանքներով, սակայն ժպիտը մշտապես շրթումքներին, դժվարությունները ուղի տակ տալով կամ, ինչպես ինչըն էր սիրում արտահայտվել՝ «քարին քացի տալով», ձեռք բերեց ուսական զիմնագիայի ավարտական վկայական:

Եվ այն, ինչ որ այնքան դժվարին էր թվում նրա աչքին՝ ո՞չ ուսման դժվարությունները հաղթահարելու տեսակետից, այլ չարքաջ կյանքը կրելու առաջ խոնարհվելու կրումով, այժմ այդ բաղձակի վկայականն իսկ ձեռք անցնելով, գօց, որ իր առաջ ծառացած է մի շատ ավելի ծանր խնդիր, որի հաջող լուծումից էր կախված իր ապագան, իր երազանքների իրազրոցումը և կյանքի վերջնական նպատակին հասնելու միջոցների գտնելը:

Այդ հարցը՝ թոշակ ունենալու խնդիրն էր: Մի հարց, որ չունենոր տան զավակների համար դյուրությամբ չեր վճռվում այդ օրերին:

Անցել էին ճեմարանի կյանքի՝ ամեն ինչ ընձեռող շրջանի օրերը, երբ ուսանողը և ո՞չ մի հոգ ուներ, ամեն ինչ պատրաստ ձեռքի տակ: Բավական էր, որ ուսանողը ունենար՝ «Sésame ouvre-toi» (ֆրանսերեն՝ «Սեզամ, քացվի՛ր» - Պ. Հ.) ասելու, հրամայելու կարողությունը և ամեն բան պատրաստ էր նրա առաջ՝ հանգիստ կյանք, խնամքի ու գորգուրանքի միջավայր, ուսում, ամեն ինչ ձրի, մեծ ու ճոխ գրադարան, խնամքով ընտրված ուսուցիչների կազմ, և այդ բոլորը միայն մի պայմանով՝ ուսման սեր և սովորելու փափագ սրտի ու մտքի մեջ:

Ծշմարիտ է, ճեմարանի աշակերտությունը երբեմն մոռանում էր այդ բոլոր պատրաստի առավելությունները և հաճախ ևս դրահ քաղաքական նկատումների հովերով տարված, ըմբռատանում էր ներքին կարգ ու կանոնների դեմ և «ապատամբություն» կազմակերպում առաջ բերելով հաճախ տղայական խոնուկ պատճառաբանություններ, թե «ազատություն չկա», «Կերակուրմերը վատ են», «Վանական մթնոլորտը ճնշող է», «Կողիկները վատ են», «գուլպաները հաստ» և այլն: Ամենքը ևս դրսից թեկադրված դասերի հովտակային կրկնություններ էին, բայց երբ պայմաններն այնպես էին դասավորվում, որ այդ չինավանողները գրկվում էին այդ «ողորմելի» բարիքներից, այն ժամանակ էին միայն անդրադառնում, թե ինչպիսի լայն, ազատ կյանքի պայմաններից էին գրկված՝ հաճախ մտովի վայելելով ճեմարանի առաջ փլավը, այգու խորովածը, հարիսան, խաշլաման, խճողակների (լցոն՝ մանր կտրտած մսի, բանջարեղենի և այլնի խառնուրդ - Պ. Հ.) տեսակները, խոզի տապակած մսերը, պտուղները, բանջարեղենը, տաքով մաքուր ամկողինը, պատրաստ հիվանդանոցն իր բոլոր հարմարություններով, ուսումը, գրուանքները, ամառային արշավները և այլն:

Մի ամառ Լազարյան ճեմարանի հայ աշակերտությունը, կովկասյան և հայկական մշակույթին ի մոտ ծանոթանալու համար, Երևան էր եկած 20-30 հոգի, որոնց ղեկավարները խճողեցին ճեմարանի վարչությունից մի երկու օր հարմարություններ տալ ճեմարանի մեջ, որ ծանոթանան Ս. Էջմիածնի և շրջակաջի հայկական պատմական հիշտակարաններին: Գևորգյան Ճեմարանի վարչությունը սիրով ընդունեց այդ առաջարկը: Ե՞րբ և ո՞ր օրը պիտի գայի՛ն հայտնի չեր: Եվ համկարծ մի օր, ճիշտ ճաշի ժամից մի կես ժամ առաջ, նրանց կառքերը կանգնեցին ճեմարանի դրսի «Կարմիր դուան» առաջ: Լազարյան

ճեմարանի աշակերտությունն առաջնորդվեց Անջարանի լայն, լուսավոր, առատ օդի շտեմարան պրահը, որ նրանց տրամադրվեցին մաքուր գգեստներ: Ծուտով նրանք մաքրված ու սաղը բաղանքի առած առաջնորդվեցին ճեմարանի աշակերտության հետ սեղանատում՝ նախապես ներողություն խնդրելով, թե քանի որ իրենց գալու օրն ու ժամանակը հրայտնի չէր, պիտի բավականանային այն համեստ ճաշով, որ ունեին:

Լազարյան ճեմարանի աշակերտները, հուսախար հավերի ճաման, թե առատ կուտ պիտի չգտնեին, թեև իրենց արտաքին արլոմ-ը (ֆրանսերեն՝ իմբանավատաբություն – Պ. Հ.) պամելով, առաջնորդվեցին սեղանատուն: Մաքուր սիոոցների, կարգավոր պահանջանի, պատ շրով լի կովաների «քրտնաթոր» տեսքը, առատ հացը, կանաչեղենների տեսակների ճոխությունը տեսնելով, մի քիչ գոտեանդվեցին, թե գոնե հաց ու կանաչեղենով կշշտանամ: Սեղանների շուրջը բոլորվելուց հետո իրենց դաստիարակ-դեկավարը սկսեց «Հայր մեր, որ յերկինս ես»: Իրենց հետ եկած մի քանի ոուս աշակերտներից մեկն ապա սկսեց «Օ'տչ նաշէ...» և սեղանն օրինելուց հետո միայն աստեցին ճաշելու: Գնորդյան ճեմարանի աշակերտության «լուսավոր առաջադիմական»-ների համար այս պարագան զարմանքի և ապշության մի բոսկ էր, որովհետև «դրսի» ազդեցությունը նրանց թերադրած էր, որ սեղան օրինելով «իհն կամքի օրերի վաճական մթնոլորտի անտանելի» վիճակ էր: Ավելի ևս մեծ զարմանք պատճառեց նրանց ոուս աշակերտի «Օ'տչ նաշէ»-ն («Հայր մեր»-ը):

Այդ օրը, միրավի, ճեմարանի սովորական օրերի լավ ճաշ էր պատրաստված. ապուր՝ բբնձով, մեջը խոշոր եփված համեմ միս, տապակած միս, խճողակ կամ «հիման գայըլի» և կանաչեղեն ու պանիր և ապա ճմերուկ:

Լազարյան ճեմարանի աշակերտության աշքերդ բաց մնացին բերանների հետ՝ տեսնելով այս «համեստ ճաշը» և գոն սրտով, գոհունակությամբ կերան և «կշտացածի» արտաքինով եղան սեղանից:

Շաշից հետո մեր «լուսամիտ դժգոհներն» աշխատեցին նորեկներին «զարգացնել» գըրգոերով ճեմարանի վարչության և կարգերի դեմ: Լազարյանցիները համբերությամբ լսեցին և ապա հանգիստ ու ամսովով պատասխանեցին.

- Աստծուն պիտի փառք տայինք, որ մեր ամենամեծ տոների օրերին այս «համեստ ճաշը» վայելեինք: Հապա ի՞նչ կանեիք, երբ ամեն օր բորշ ու կաշա, ըշչի ու կաշա և թթու կադամը ուտեիք, իսկ երեսն ևս հազվադեպ եղան տապակած միս... Հիմարներ մի՞ լինեք: Լավն եք տեսել ու զազազվել:

Եվ երբ հետևկալ օրը նրանց անտարի մեջ նախաճաշ տվին, իսկ ալգու մեջ՝ ճաշ՝ վաճքի պատմական փլավով և ոչխարի խորովածով, առատ՝ ամեն տեսակ մրգեղենով, նրանք չեն հավատում, թե այդ բոլորը կարող են համարավոր լինել և որ դա ճեմարանականների ամենօրյա սովորական ուտելիքն է: Եվ դեռ այս բոլորից հետո «խելոքներ» կլինեն աշխարհի մեջ, որ կարող են դժգոհ լինել:



էր, որովհետև «թուր պիտի կով տար»: Եվ այդ բոլորի հետ հարկավոր էր թոշակ գտնել:

Որտեղից: Խնչպե՞ս: Ո՞վ էր ճանաչում նրան, որ վստահեր:

Այդ այն շրջանը էր կովկասյան հայության համար, որ մեր մեծ ու փոքր հարուստները, ընկերությունները, հաստատությունները տարված էին մի մեծ, կարուր գաղափարով՝ սերունդ պատրաստել, վաղվա մարդը, հասարակական գործիչը, ուսուցիչը, քահանան՝ կրթված, զիտությամբ զինված և գալիք կյանքի պայքարին պիտանի և ունակ:

Բարձի և Թիֆլիսի հայ հարուստներն ամենքը ևս ունեին թոշակավոր ուսանողներ արտասահմանի և ուսական համալսարանների մեջ: Ամոռ էր և փոքրություն, երբ աչքի ընկնող հայ հարուստը իր թոշակավոր ուսանողը կամ ուսանողները չունենար: Եվ այդ անձեռը, որոնք բախսի հաջող բերումով հարստացած, սակայն մեծագուն մասավ իրենք ուսումից և կրթությունից գուրկ էին, գիտեին, հավատում էին և խորապես համոզված հոգիներ էին, թե դրամը միշտ է միայն շուրջը մշակույթ տարածելու համար և այդ մշակույթի վաղվա դրոշակակիրները շուրջը վխտացող ուսման ծարավով տարված հայ ուսանողությունն էր: Գիտեին նաև, որ ոմանք «փուչ դուրս կօճան», շատերը «մարդ չեն դառնա», ոմանք ևս «afferist կուլին», բայց եթե «հարյուրից մեկն» իսկ պիտանի լիներ, էն էլ «խոմ ուփրոց (վրացերեմ՝ էլ ավելի - Պ. Հ.) լավ կովի»:

Այդպիսի մտածողների մեջ ամենից ականավորը հայ առևտրական աշխարհի մեջ հայտնի և՝ սրտով, և՝ գրամով հարուստ Ալեքսանդր Հ. Մանթաշյանն էր: Խնքը միայն չէր հայ երկնականարի համատեղության մեջ: Այդ աստեղատան մյուս փայլուն աստեղից էին Առաքել-ապեր Շատուրյանը, Ավետիք Բալ. Ղուկասյանը, Թումայան եղբայրները, Մ. Դոլոխանյանը, Նաբարյան եղբայրները, Միքայել Յ. Արամյանը, Առաքելյան եղբայրները, Ժամիրյան եղբայրները, Լիանոնցը, Համբ. Մելիքյանը և այլն: Բայց այդ բոլորի մեջ առաջին տեղն էր բռնում Ալ. Մանթաշյանը՝ զիտակցական ըմբռնումի բարերարն ամեն շրջանի, միջավայրի, պետքի ու կարևորության ժամանակ:

Ալ. Մանթաշյանը բարեգործ էր, բարերար, նպաստող, տվող, բայց այն տեղի ու նպատակի համար, որին հավատում էր, որի մեջ համոզված էր անհատաբար և կամ որևէ անձի ազդեցությամբ, որի Ըկատմամբ խոր ու անխախտ հավատք ուներ՝ թե նրա առաջարկն ու առաջարկած անձը կարևոր են և պիտանի ազգի ու Եկեղեցու համար: Մանթաշյանը թեև մեծահարուստ էր և միշտները լայն ու առատ, սակայն «յամպէտս դրամ ծախսելու, դրամը քամուն տալու»-ն ո՛չ հավատում էր և ո՛չ գործադրում: Հազարներ չխնայող այդ անձը հաճախ կոպեկների հետևից էր ընկած, շատ նեռու լինելով «կոպեկանց մարդ» լի-նելուց: